

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՆՔ

Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային ամրակցված կապի ծածկույթի (ներթափանցելիության) ապահովման աշխատանքների ընթացքի վերաբերյալ

Հաշվի առնելով ՀՀ տարածքում հանրային ամրակցված հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայությունների զարգացման և ենթակառուցվածքների հասանելիության ուղղությամբ իրականացված աշխատանքները՝ հանձնաժողովի աշխատակազմի հեռահաղորդակցության վարչությունը վերլուծել է հեռահաղորդակցության ոլորտում լիցենզավորված գործունեություն իրականացնող հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված կապի ծառայություններ մատուցող օպերատորների կողմից հանձնաժողով ներկայացվող հաշվետվությունները, ինչպես նաև իրենց ինտերնետային կայքերում յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ի դրությամբ հրապարակվող տեղեկատվությունները:

ՀՀ տարածքում հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված կապի օպերատորների կողմից լարային և անլար տեխնոլոգիաների կիրառմամբ մատուցվում են ամրակցված հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություններ:

2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հանրապետությունում գործում են հանրային էլեկտրոնային հաղորդակցության ամրակցված կապի 155 լիցենզավորված օպերատոր, այդ թվում՝ հանրային ամրակցված հեռախոսակապի ծառայություններ մատուցող 14 օպերատոր, որոնցից 3-ը ծառայություններ են մատուցում հանրային ամրակցված հեռախոսային ցանցի տարածաշրջանային (աշխարհագրական) կողերով:

Ընդ որում, նախորդ երկու տարիների հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի լիցենզիաների տրամադրման դինամիկայի վերլուծության համաձայն՝ 2017-ից մինչև 2019 թվականների հուլիսի 1-ն ընկած ժամանակահատվածում հանձնաժողովի կողմից տրամադրված 78 լիցենզիաներից 63-ը տրամադրվել են հանրապետության տարբեր մարզերում գործունեություն իրականացնելու համար, ինչի արդյունքում

հանրապետության մարզերում զարգացել են հանրային ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության ցանցերը և դրանց փոխադարձ ներթափանցելիության ցուցանիշները:

Ամրակցված հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություններ մատուցող հիմնական օպերատորներն են «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ն, «Յուբոմ» ՍՊԸ-ն և «ՋիԷնՍի-ԱԼՖԱ» ՓԲԸ-ն, որոնք այդ ծառայությունները մատուցում են պղնձալարային ADSL, օպտիկամանրաթելային FTTB/H, լարային Ethernet, 450ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում աշխատող անլար ամրակցված և այլ տեխնոլոգիաների հիման վրա:

Հանձնաժողովի որոշումների համաձայն՝ ՀՀ մարզերում CDMA անլար տեխնոլոգիայի հիման վրա, գործող հեռախոսակապի արդիականացման՝ «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի լիցենզիոն պարտավորությունների կատարման արդյունքում ընկերությունը 450ՄՀց ռադիոհաճախականությունների տիրույթում աշխատող անլար տեխնոլոգիայի կիրառմամբ արդիականացրել է CDMA հեռախոսակապը, ինչը հնարավորություն է ընձեռում ստանալ ամրակցված լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություններ հանրապետության 996 բնակավայրերում:

Միաժամանակ, հանրային ամրակցված կապի լայնաշերտ տեխնոլոգիաների ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ իրականացված աշխատանքների արդյունքում 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀՀ 333 բնակավայրերում (33.2%) հասանելի են դարձել FTTx տեխնոլոգիայի վրա հիմնված օպտիկամանրաթելային ցանցերը:

Բացի այդ, «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ն ՀՀ 182 բնակավայրում մատուցում է լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություններ՝ ADSL տեխնոլոգիայով, ինչը բնակավայրերի ընդգրկվածության առումով նախորդ տարվա համեմատ աճել է ավելի քան 10%-ով (17 բնակավայր):

2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ թվային կայաններին միացված է հանրային ամրակցված հեռախոսակապի բաժանորդների շուրջ 96,6 տոկոսը: Արդյունքում՝ Երևան քաղաքում թվայնացման մակարդակը կազմել է 100 տոկոս, իսկ մարզերում՝ շուրջ 90,6

տոկոս: Ընդհանուր առմամբ հանրապետությունում ամրակցված հեռախոսակապի թվայնացման աճը կազմել է ավելի քան 3 տոկոս:

Վերլուծության ընթացքում հաշվի է առնվել «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքը, որի համաձայն՝ ՀՀ տարածքում առկա է 1003 բնակավայր (ներառված չէ Գեղարքունիքի մարզի Արծվաշեն բնակավայրը), որոնցից 32-ում բնակչություն առկա չէ, սակայն դրանցից 28-ում առկա է հանրային ամրակցված կապի ծածկույթ, իսկ հանրային ամրակցված կապի ծածկույթ չունեցող չբնակեցված մնացած 4 բնակավայրում առկա է հանրային շարժական կապի ծածկույթ:

Հաշվի առնելով նշվածը՝ կարելի է փաստել, որ ներկայումս ՀՀ բոլոր բնակավայրերը ապահովված են լարային և (կամ) անլար տեխնոլոգիաների կիրառմամբ հանրային ամրակցված հեռախոսակապի և լայնաշերտ ինտերնետ ծառայությունների հասանելիությամբ:

Մասնավորապես,

ՀՀ 996 (99.3%) բնակավայրում հասանելի են հանրային ամրակցված հեռախոսակապի անլար տեխնոլոգիաների ծառայությունները և 228 (23%) բնակավայրում՝ հանրային ամրակցված հեռախոսակապի լարային տեխնոլոգիաների ծառայությունները:

Հանրային ամրակցված հեռախոսակապի ծառայությունների հասանելիությունն ըստ օպերատորների բաշխված է հետևյալ կերպ.

938 բնակավայրում՝ 1 օպերատոր, 13 բնակավայրում՝ 2 օպերատոր, իսկ 48 բնակավայրում՝ 3 և ավելի օպերատոր:

Բացի այդ, հանրային ամրակցված հեռախոսակապի անլար և լարային տեխնոլոգիաների կիրառմամբ ծառայությունների հասանելիությունն ըստ օպերատորների բաշխված է հետևյալ կերպ.

Լարային տեխնոլոգիա՝ 174 բնակավայրում՝ 1 օպերատոր, 8 բնակավայրում՝ 2 օպերատոր, իսկ 46 բնակավայրում՝ 3 և ավելի օպերատոր,

Անլար տեխնոլոգիա՝ 996 բնակավայրում 1 օպերատոր:

Հանրային ամրակցված լայնաշերտ ինտերնետ ծառայությունների անլար տեխնոլոգիաների հասանելիությամբ ապահովված են 997 (99.4%) բնակավայր և լարային տեխնոլոգիաների կիրառմամբ՝ 460 (45.9%) բնակավայր:

Հարկ է նշել, որ նախորդ տարվա համեմատ հանրային ամրակցված լայնաշերտ ինտերնետ ծառայությունների լարային տեխնոլոգիաների կիրառմամբ ապահովված ՀՀ բնակավայրերի ընդգրկվածությունն աճել է 87 բնակավայրով՝ շուրջ 24%-ով:

Հանրային ամրակցված լայնաշերտ ինտերնետի ծառայությունների հասանելիությունն ըստ օպերատորների բաշխված է հետևյալ կերպ.

556 բնակավայրում՝ 1 օպերատոր, 196 բնակավայրում՝ 2 օպերատոր, իսկ 247 բնակավայրում (հանրապետության բնակավայրերի 24,6%-ում)՝ 3 և ավելի օպերատոր:

Այս առումով, աճի դինամիկա է գրանցվել 3 և ավելի օպերատորների հանրային ամրակցված լայնաշերտ ինտերնետի ծառայությունների հասանելիությամբ ապահովված բնակավայրերի ցուցանիշում՝ լրացուցիչ 103 բնակավայր:

Բացի այդ, հանրային ամրակցված լայնաշերտ ինտերնետի անլար և լարային տեխնոլոգիաների կիրառմամբ ծառայությունների հասանելիությունն ըստ օպերատորների բաշխված է հետևյալ կերպ.

լարային տեխնոլոգիա՝ 286 բնակավայրում՝ 1 օպերատոր, 99 բնակավայրում՝ 2 օպերատոր, իսկ 75 բնակավայրում՝ 3 և ավելի օպերատոր,

անլար տեխնոլոգիա՝ 645 բնակավայրում՝ 1 օպերատոր, 218 բնակավայրում՝ 2 օպերատոր, իսկ 134 բնակավայրում՝ 3 և ավելի օպերատոր:

Ամփոփելով վերոնշյալը, պետք է արձանագրել, որ նախորդ տարվա (2018 թվականի հունվարի 1-ի) համեմատ ՀՀ բնակավայրերում 8.7%-ով ընդլայնվել է լարային տեխնոլոգիաների կիրառմամբ հանրային ամրակցված լայնաշերտ ինտերնետ ծառայությունների հասանելիությունը և 10.3%-ով՝ 3 և ավելի օպերատորների հանրային ամրակցված լայնաշերտ ինտերնետի ծառայությունների հասանելիությունը:

2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետության բնակավայրերում հանրային ամրակցված ցանցի ներթափանցելիության վերաբերյալ

Մարզեր	Ամրակցված հեռախոսակապ							
	Լարային				Անլար			
	1 օպերատոր	2 օպերատոր	3 և ավելի օպերատոր	Ներթափանցելիություն չկա	1 օպերատոր	2 օպերատոր	3 և ավելի օպերատոր	Ներթափանցելիություն չկա
Արագածոտնի մարզ	19	0	4	97	120	0	0	0
Արարատի մարզ	13	1	4	81	99	0	0	0
Արմավիրի մարզ	18	0	4	76	98	0	0	0
Գեղարքունիքի մարզ	9	0	5	83	97	0	0	0
Լոռու մարզ	17	1	5	107	130	0	0	0
Կոտայքի մարզ	9	5	4	51	69	0	0	0
Շիրակի մարզ	10	0	6	114	130	0	0	0
Սյունիքի մարզ	27	0	6	105	137	0	0	1
Վայոց ձորի մարզ	40	0	3	12	50	0	0	5
Տավուշի մարզ	12	1	4	49	66	0	0	0
ք. Երևան	0	0	1	0	0	0	0	1
ԸՆԴԱՄԵՆՆԸ	174	8	46	775	996	0	0	7

Մարզեր	Լայնաշերտ ինտերնետ							
	Լարային				Անլար			
	1 օպերատոր	2 օպերատոր	3 և ավելի օպերատոր	Ներթափանցելիություն չկա	1 օպերատոր	2 օպերատոր	3 և ավելի օպերատոր	Ներթափանցելիություն չկա
Արագածոտնի մարզ	17	5	4	94	90	21	9	0
Արարատի մարզ	43	31	14	11	12	45	42	0
Արմավիրի մարզ	61	18	8	11	27	57	14	0
Գեղարքունիքի մարզ	22	12	7	56	57	20	20	0
Լոռու մարզ	24	5	5	96	117	9	4	0
Կոտայքի մարզ	17	7	15	30	40	20	9	0
Շիրակի մարզ	24	10	8	88	70	34	26	0
Սյունիքի մարզ	28	6	6	98	134	3	0	1
Վայոց ձորի մարզ	26	0	3	26	45	3	2	5
Տավուշի մարզ	24	5	4	33	53	6	7	0
ք. Երևան	0	0	1	0	0	0	1	0
ԸՆԴԱՄԵՆՆԸ	286	99	75	543	645	218	134	6

* Առանց Արծվաշեն բնակավայրի

* Հաշվարկվել է 1003 բնակավայրով ներառյալ Երևանը